

տագնապաճ՝ ըրին չըրին բանտը մտան, և կարծելով թէ զիրենք տեսնող չըկայ՝ գրկուեցան անոր հետ ու կուլային սիրոյ արցունքներով, և ճար մը կ'ուզէին գտնել զինքը խալսելու: Ինչպէս եղաւ՝ պատահմամբ մէկը դըրսէն այս տեսարանը տեսաւ, և գիտնալով որ այն երկուքն էին զյանցաւորը դատաւորին մատնողը, հետաքրքրութիւնը շարժեցաւ բանին ծայրը իմանալու. ուստի անոնք բանտէն որ ելան, ասիկայ առանց տեսնուելու ետեւէն գնաց, ինչուան որ անոնք տուն մը տան. հոն դուրսը կեցած՝ մտիկ ըրաւ որ ասոնք կը պատմէին իրենց մօրը ինչ որ ըրին, և մայրերնին ալ սկսաւ լալ ու ողբալ, և պատուիրեց անոնց որ առած ստակնին ետ դարձնեն՝ ըսելով թէ « Ես աւելի կ'ուզեմ անօթութենէ մեռնիլ, քան թէ որդւոյս կեանքը վըտանդի մէջ դնելով՝ իմ կեանքս պահել »: Իսկ իմանալէն վերջը՝ այս մարդը եկաւ ամէն բան տեղն ի տեղը դատաւորին իմացուց: Դատաւորը զարմացաւ մնաց թէ այսպիսի հրաշալի ծնողասիրութիւն կրնայ արդեօք զրտնուիլ. և մէկէն դիմացը կանչել տալով

յանցաւորը՝ դարձեալ քննեց զանիկայ, ու ինչուան սարսափեցաւ այլ որ եթէ ճշմարտութիւնը չխոստովանի՝ սաստիկ պատիժ կը դնէ վրան. բայց պատանին, որուն սրտին մէջ մայրական սէրը առաջին կիրքն էր, անշարժ կեցաւ ամէն կերպ ճարտարութեան դէմ ու ինչուան վերջը իբրեւ յանցաւոր ամբաստանեց զինքը: Դատաւորը գթութենէն ալ չկրցաւ ինքըզինքը զսպել, վազեց պլուեցաւ տղուն, ու անյագ բերնով անոր դիւցաղնական գործքը կը գովէր. ետքը առաւ տարաւ զանիկայ կայսեր առջև: Եւ այսին ալ սաստիկ զարմանալով՝ ձեռքը տղուն ուսին վըրայ դրաւ ու « Ո՛վ առաքինի տղայ, ըսաւ, քու գործքդ՝ առաքինութեան սովորական գործքը չէ, բայց առաքինութենէն ծընած ըլլալուն՝ մեծ գովեստից արժանի է. բոլոր աշխարհք այս քու վեհանձնութեանդ վըրայ պիտի խօսի. իսկ ես՝ կ'ուզեմ վարձատրել »: Եւ ըսելով՝ կանչել տուաւ անոր մայրն ու երկու եղբայրները, առատ թոշակ մը կապեց իրենց և բնակութիւննին արքունեաց մէջ հաստատել տուաւ:

## Մ Ա Ն Ր Գ Ի Տ Ե Լ Ի Ք

### ԱՍՏՂԱԲԱՇԽԱԿԱՆ

Այն նախադրացումը, անորոշ առ բազումս ի հին աստեղաբաշխից, որոշ մեծին Քերէրի մտացը մէջ, թէ Հրատին ու Լուսնի մագին պարունակացը մէջ տեղն եղած ընդարձակութիւնը տնրնակ պիտի չըլլայ, այլ հարկ է որ հոն ալ երկնային մարմին պտտի, որ մասնաւոր պատճառներէ անտեսանելի է, անկարծելի կերպով մը ստուգուեցաւ 1801ին առաջին աստեղաապին գիւտովը, զոր գտաւ Բիւացի: Բայց այս խեղճ Դեմկարէն այնչափ փոքրամարմին կ'երևար, որ մարդուն հաւատարմ չէր դարձնէ այն ընդարձակ ասպարիզին մէջ միմտակ պտտի. և իրաւունքն շատ չանցաւ աստեղաբաշխէ ասոր ճամբուն վըրայ գարանելով իրեն խորհրդաւոր ընկերներէն երեք հատ ալ դտան: Այս նոր գիւտերով աստեղաբաշխից միաքը հանգարտեցաւ. վասն զի այն աստեղները երկնային գաշնակութեանց և յարաբերութեանց

հանձարիմաց բայց միանգամայն մոտեցածին օրինաց զմայլեր էին, և անձգգրիտ ծանօթութիւններով կը կարծէին թէ այն չորս մանր մոլորակները մեկտեղ առնելով՝ կը հաւասարէին ուրիշ միջական մեծութեամբ մոլորակի մը զանգուածոյն, և թէ անոնց միջին հեռաւորութիւնները ամենեւին չեն այլայլեր Վելսիոսի երեակայած ու անցեալ գարուն վերջերը Պոտէ աստեղաբաշխէն վերանորոգած օրէնքը, որով սեպեցին թէ ամէն բան լըմընցաւ. եղան ալ ոմանք որ ըսին թէ ասոնք այն մեծ մոլորակին կաորուանքներն ըլլան, որոնք ուժգին բախմամբ մը մեկմեկէ բաժնուելով՝ իրարու մօտ բայց իրարմէ անկախ շարունակած ըլլան իրենց անսպառելի շրջանը կատարել արեւուն բոլորովը: Եւ յայտնա երեսունըութը տարի աստեղաբաշխէ այս սխալ վճռոյս ապաւինած՝ անգործ մնացեր էին, մէյ մ' ալ հէնքէ Արարեային գիւտովը վերակենցաղեց անոնց մեռեալ ակնկալութիւնները և խրախուսեց զանոնք նորանոր գիւտերու, որով քիչ ժամանակուան մէջ նոյն տե-



դուռնքն ուրիշ երեսուններեք մուրաքներ ալ  
գտունեցան : Եւ անցեալ յունուար ամսոյն 12ին  
իրիկունը Հագոռնագ գաղղիացի աստեղաբաշխը  
Բարիդու կայսերական գիտարանէն նայելով՝ մէկ  
նոր պղտի մուրակ մըն ալ գտեր է , որուն լոյսը  
իններորդ կամ տասներորդ աստիճանի մեծ ու  
թեամբ աստղերուն հաւասար է : Ասիկայ արդեօք  
վերջինը պիտի ըլլայ : Մենք չենք կարծեր : Աս-  
տեղաբաշխից հակող ճարտարութիւնը և հիմա-  
կուան երկնացոյց տախտակաց ճշգուծութիւնը , ու  
րոնցմով շուտ մը կը ճանչցուի շարժուն աստղ մը  
հաստատուն մը , որչափ ալ պղտիկ ըլլայ , յոյս կու  
տան նորանոր և մեծամեծ գիւտից . որով այն գե-  
ղեցիկ գօտին , որ նորանշան կերպով իր պարու-  
նակօքն հիւսուած գրեթէ հազար միլիոն միլոն մի-  
ջոց կը չափէ , ու ութ մեծ մուրաքները երկու  
համասեր և զոնազան խումբեր կը բաժնէ , որ ա-  
ւուր վրայ երթալով պիտի զարգարուի նորագիւտ  
գոհարներով , և այն փառաւոր պատկը պիտի կազ-  
մէ , զոր բանաստեղծութիւնը երևակայեց , բայց  
հնոց գիտութիւնը չգիտցաւ բոլորէլ արևուն ոս-  
կեփայլ վարսիցը :

#### ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

Լաֆոնդէն գաղղիացին ինչ տեսակ բանաստեղ-  
ծութեան մէջ երևելի է :

— Լաֆոնդէն աշխարհքիս ամենէն անուանի  
առականսն է , որուն հաւասար մը դժուարին է  
որ կարենայ ելլել : Ինքը բուն գաղղիական ոգւով  
լեցուած է , միանգամայն հնոց բանաստեղծու-  
թեան օծութիւն մըն ալ ունի . իր առականը Ե-  
զոբոսէն կամ ուրիշ առականսներէ առած է ,  
բայց այնպիսի բնականութիւն մը տուած ու ա-  
նանկ բոլորովին իրեն սեփականած է այն նիւ-  
թերը , որ կարգապօղը Լաֆոնդէնի հնարքը կը  
սեպէ զանոնք : Կենդանութիւն մը կայ առականե-  
րուն մէջ , որ կարծես թէ ամէն բան աչքիդ՝ գի-  
մացը կը հանդիպի . վստի զի ինքը ամէն գրած բա-  
նէրը՝ ճշմարտապէս ներքուստ զգացած է . անոր  
համար իր ոճն ալ բոլոր իմաստալից ու նկարա-  
գրական է , և լեզուին ոչ նիւթական պաշտօն մը  
միայն տուած է , այլ այնպիսի աղատ թռիչ մը ,  
որ ուզած մէկ իմաստը առանց անոր պատշաճեալ  
բառերուն կը բացատրէ : Լաֆոնդէնի առականը  
պարզութեամբ ալ երևելի են , որ իր ընտրած ի-  
մասաներուն բնականութենէն առաջ կու գայ .  
բայց որչափ որ իր աշխոյժ ոգւոյն ձեռքը թողած  
ինքըզինքը՝ բնականութեամբ գրած է , այնչափ  
ալ գերազանց արուեստ մը կը փայլեցնէ , և իւ-  
րաքանչիւր մէկ առակը սաստիկ մտածելով և անա-  
չառ ու կիրթ քննութեամբ կը լռելով կը գրէր :  
Ամէն հասակի մարդու Լաֆոնդէնի առականը  
ամենամեծ սփոփանք մըն են միշտ , ոչ միայն իրեն  
գերազանց զուարճաբանութեանն ու ախորժելի  
բացատրութիւններուն համար , հապա որովհետեւ  
ինքը ամէն տեսակ կիրք ու ոճ կ'առնէ , և անկար-  
ծելի գիւրութեամբ մէկէն մէկալը կ'անցնի . միան-  
գամայն որովհետեւ միշտ ազնուական , զգայուն ու

փափուկ են իր մտածութիւններն ու լեզուն : Լա-  
ֆոնդէն իր առականը մէջ բարեւիրա ու անուշ  
մարդ մը կ'երևայ . բայց նաև այնպիսի մաքի խո-  
րութիւն ու իր անձին բնական խորամանկութիւն  
մը կը ցուցնէ իրեն ճարտար ու առաջաստեալ  
զուրցուածքներով , որ առանց իրեն բարեսրտու-  
թիւնը վերցնել տալու՝ քաջ երգիծաբանի մը տեղ  
կրնայ անցնիլ . ընդհանրապէս երբոր իր բերնէն  
կը խօսի՝ այս կերպը կը բանեցնէ , և ուրիշի բեր-  
նէն բուռն , ազգու ու սուր լեզուով կը խօսի :  
Նմանապէս իրեն մտածութեան թափանցողու-  
թիւնն ալ՝ ինչուան փիլիսոփայի կարգ կը հանէ  
զինքը : Բայց Լաֆոնդէն ալ ունի իրեն սեփական  
պակասութիւնները . տեղ տեղ լեզուի կողմանէ  
թերութիւն ունի , տեղ տեղ իր առականը բարոյա-  
կանները հասարակ են , կամ անորոշ , տար-  
տամ , և կամ իրեն ուրիշ առածներուն հակառա-  
կախօս . երբեմն ալ մոլոր բարոյական կը հանէ .  
բայց այս պակասութիւններուն պատճառը կէս  
մըն ալ իր կենաց անհաստատ փոփոխականութե-  
թիւնն ու իր անհանգարա վիճակն էր : — Սկըզ-  
բան Լաֆոնդէն այնչափ համարմունք մը չունե-  
ցաւ . բայց ետքը ժամանակով իմացուցաւ որ  
Լաֆոնդէնի կերպով չինուած առականը՝ մարդ-  
կային մտքին մատենագրական հնարքներուն գե-  
ղեցկագոյններէն մէկն են :

#### ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

Ինչ գիտնալիք կայ Քերրոն քաղաքին վրայ :  
— Քերրոն քաղաքը Յուդայի ցեղին մեծագոյն  
քաղաքն էր , ուր եօթնսուկէս տարի թագաւորեց  
առանձին Գաւթի Յուդայի վրայ : Ասիկայ սկըզ-  
բան Աբդի կամ Կաթիւ-Բաբի կ'ըսուէր . վերջէն  
Մաթթի ալ ըսուեցաւ՝ Մաթթի ըսուած իշխանի  
մը անունէն . և ամենէն ետքը Քեթթի : Ասոր մօ-  
տերը կաղնիի անտառ մը կար , որ Մաթթիի Կաթի  
կ'ըսուէր , և Աբրահամ Նահապետը հոն կը բնա-  
կէր . հոն մեռաւ Սառա , որուն համար նոյն տե-  
ղը գերեզմանոց մը գնեց Աբրահամ , և հոն թա-  
ղուեցան բոլոր Նահապետները : Այս տեղս վերջը  
վիճակով Յուդայի ցեղին ինկաւ , և Քաղէթ ժա-  
ռանգեց Աստուծոյ հրամանաւր : Ետքը Ղաւա-  
ցոց տրուեցաւ , ու քաղաք պաշտտանի եղաւ :  
Հիմա Խաւէլ Ռահմա կ'ըսուի :

#### ԱՌԱԿ

Այլ Խափաւորալ և Լաւ :

Այլ մի թագաւորալն սաստիկ նեղեցաւ ի  
լուէ , և արուեստիւ կալաւ զնա : Եւ լուէն ասէ .  
Աղաչեմ՝ զքեզ մի սպանաներ զիս , զի փոքր է վը-  
նասդ զոր արարի քեզ : Եւ նա ասէ . Զոր կարա-  
ցեր՝ սրարեր :

Յուցանէ առակս թէ պարս և իշխանաց և թա-  
գաւորաց և դատաւորաց՝ զփոքր չարագործն հո-  
գալ և տանջել , որ երկիցեն մեծամեծ չարա-  
գործքն :

#### ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ